ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (XVIII Դ. ՍԿԻԶԲ)

Ա. Հ. ՔՅՈՒՐՔՋՅԱՆ

Հայ և ռուս ժողովուրդների տնտեսական կապերը դարերի պատմություն ունեն։ Դրանք հատկապես մեծ առաջընթաց ապրեցին սկսած XVII դ. երկրորդ կեսից՝ պայմանավորված այն մեծ օգուտով, որ Ռուսաստանը կարող էր քաղել լավ կազմակերպված արևելյան առևտրից։ Այդ իսկ պատճառով ցարական կառավարությունը որոշեց պետական պաշտոնական պայմանագիր կնքել Պարսկաստանի հետ։ Քանի որ պարսկական առևտուրն այդ տարիներին գըտնվում էր հայ վաճառականների (հիմնականում Նոր-Ջուղայի հայ գաղութի) ձեռքում, ուստի պայմանագիրը կնքվեց ռուսական կառավարության և Նոր-Ջուղայի հայ վաճառականական ընկերության միջև։

1667 թ. հայ-ռուսական առևտրական պայմանագիրը շրջադարձային կետ էր հայ-ռուսական տնտեսական հարաբերությունների պատմության մեջ։ Բազմաթիվ ուսումնասիրողներ (Զ. Գրիգորյան, Վ. Պարսամյան, Վ. Ոսկանյան, Ն. Կուկանովա, Վ. Լիսցով և ուրիշներ) իրավացիորեն նշել են այդ պայմանագրի առաջադիմական դերը հայ-ռուսական տնտեսական հարաբերությունների զարգացման գործում։ Այդ պայմանագրով հայ վաճառականները ստացան այնպիսի արտոնություններ, որոնք չէին վերապահվում Ռուսաստանում առևտուր անող մյուս վաճառականական ընկերություններին։

Ռուսական կառավարության հովանավորումը հայ վաճառականներին բոլորովին էլ պատահական չէր։ Նրանց օգնությամբ ցարական կառավարությունը ցանկանում էր Վոլգա-կասպյան ճանապարհը դարձնել Եվրոպան Արևելքի երկրների հետ կապող միակ առևտրական ուղին և Ռուսաստան տեղափոխել զանազան արևելյան ապրանքներ, առաջին հերթին մետաքս։

Մետաքսի ներմուծումը Ռուսաստան համեմատաբար աշխուժացավ XVII դ. վերջին տասնամյակում, սակայն շուտով ընդհատվեց Հյուսիսային պատերազմի հետևանքով, որը երկրի տնտեսական զարգացմանը զգալի վնաս հասցրեց։ Այնուամենայնիվ, չնայած միջազգային անբարենպաստ դրությանը, Պյոտր I-ի բարեփոխումների շնորհիվ XVIII դ. առաջին քառորդում Ռուսաստանը տնտեսության բոլոր բնագավառներում, այդ թվում նաև արտաքին առևտրում զգալի առաջընթաց ապրեց։ Ռուսական կառավարությունը և Պյոտր I-ը հովանավորում էին նոր բարձրացող վաճառականական դասին, նրան համարելով երկրի տնտեսական հիմնական սյուներից մեկը։ Պատահական չէ, որ այդ դասի գաղափարախոսությունը բավականին լայն տարածում գըտավ Ռուսաստանում։

Արևելքի հետ Ռուսաստանին կապող հիմնական օղակը Կասպից ծովն էր։ Վերջինիս դերը զգալիորեն մեծացավ այն ժամանակ, երբ ռուսական կառա-

վարությունը սկսեց լուրջ ուշադրություն դարձնել երկրի արևելյան առևտրին։ Եվրոպայի մյուս մեծ տերությունների նման Ռուսաստանին ևս հետաքրքրող առաջին երկիրը Հնդկաստանն էր։ Դեռևս XVII դ. ցարիզմը ցանկանում էր թափանցել Հնդկաստան, որի առասպելական հարստությունները գրավում էին շատ պետությունների առևտրական ընկերությունների ուշադրությունը։ XVIII դ. սկզբում Պյոտր I-ի նման ուժեղ և եռանդուն միապետի գլխում այդ հարցը գործնական ձև ստացավ, սակայն Խիվայով և Բուխարայով Հնդկաստան թափանցելու փորձը հաջողությամբ չպսակվեց։ Ուղարկված էքսպեդիցիան ոչնչացավ։ Դրանից հետո ցարիզմը որոշեց Հնդկաստան թափանցելու միջոց դարձնել Պարսկաստանը։

Ցարիզմը Հնդկաստան չհասավ, բայց պայքարը արևելյան առևտրում գերիշխանություն ձեռք բերելու համար նոր փուլ մտավ։ Ռուսական կառավարությունը որոշեց վերջնականապես լուծել առևտրական ուղիների առաջնության հարցը և Վոլգա-կասպյան ճանապարհը դարձնել Եվրոպան Արևելքի հետ կապող միակ առևտրական ուղի։

Ռուսական կառավարությունը չէր կարող անտարբերությամբ նայել, թե ինչպես մետաքսը արտադրվում էր Ռուսաստանի սահմանամերձ շրջաններում, բայց Եվրոպա էր դնում Թուրքիայով և Միջերկրական ծովով։ «Սպահանում հիմնված անգլիական և հոլանդական գրասենյակներն իրենց գործակալներին ուղարկում էին Շամախի, այստեղ հավաքվող մետաքսը գնելու և այն Հալեպի և Զմյուռնիայի վրայով Եվրոպա ուղարկելու համար։ Տարբեր երկրների վաճառականները, հատկապես հայերը, հույները և թուրքերը գալիս էին Ռեշտ ու Կեսկեր, այստեղ գնում էին մետաքսի հումք և տանում Պարսից ծոցի և Միջերկրական ծովի նավահանգիստները»[1]։

Ըստ Վ. Պ. Լիսցովի, հայկական առևտրական ընկերությունը միայն Գյանջայից Հալեպ էր ուղարկում տարեկան 900—1000 հակ մետաքսի հումք (յուրաքանչյուր հակը 400 ֆունտ)[2]։ Ցարական կառավարությունն այդ հանդուրժել չէր կարող։ Արևելյան ապրանքները և, առաջին հերթին, մետաքսը կարող էին կարևոր գեր խաղալ Ռուսաստանի նոր զարգացող մանուֆակտուրային արդյունաբերության համար, քանի որ Ռուսաստանն այդպիսիք չուներ։ Մետաքսագործական մանուֆակտուրաները սեփական հումքով ապահովելու ուղղությամբ ռուսական կառավարության ջանքերը ավարտվեցին անհաջողությամբ։ Թերեքի և Աստրախանի շրջանում գցված թթի ոչ մեծ այգիները չտարածվեցին, որովհետև տեղացիները արտադրում էին միայն այնքան մետաքս, ինչքան պետք էր իրենց անձնական կարիքների համար։ Ուստի ռուսական կառավարությունը ցանկանում էր ավելի ընդլայնել առևտուրը Պարսկաստանի հետ, հույս ունենալով մերձկասպյան նահանգներում արտադրվող մետաքսը բերել Ռուսաստան և ոչ միայն առաքել Արևմտյան Եվրոպայի երկրները, այլև օգտագործել սեփական մետաքսագործական մանուֆակտուրային արդյունաբերության զարգացման համար։ Հենց սրանում էր պյոտրյան շրջանի ռուս-պարսկական առևտրի տարբերությունը նախորդ շրջանի առևտրից։ «Եթե մինչ-պյոտրյան ժամանակաշրջանում Իրանի հետ ռուսական առևտուրը կրում էր գլխավորապես... տարանցիկ բնույթ, ապա XVII դ. վերջից իրանական հում-

[1] В. П. Лысцов, Персидский поход Петра I 1722—1723, М., 1951, стр. 51.
[2] Նույն տեղում, էջ 52։

քը (մետաքսի հումքը և բամբակը) ներմուծվում էր նաև սեփական տնտեսական կարիքները բավարարելու համար»[3]։

Պարսկական առևտուրը Ռուսաստանի համար կարևոր նշանակություն ուներ նաև այլ առումով։ Խոշոր ազնվականները և նոր բարձրացող առևտրական դասը ձգտում էին պերճանքի առարկաներ և արևելյան համեմունքներ ձեռք բերել։ Ճիշտ է, այդ պահանջների մի մասը բավարարվում էր Արևմտյան Եվրոպայի երկրներում արտադրված զանազան իրերի շնորհիվ, բայց զանազան կերպասների, մետաքսյա գործվածքների, թանկարժեք քարերի և այլ իրերի ներմուծման տեսակետից Արևելքն անգերազանցելի էր։

Հաշվի առնելով այն մեծ օգուտը, որ Ռուսաստանը կստանար արևելյան և արևմտյան երկրների միջև առևտրական միջնորդ հանդիսանալու դեպքում, ցարական կառավարությունը լրջորեն ձեռնամուխ եղավ արևելյան ամբողջ առևտուրը նախկին ճանապարհից Վոլգա-կասպյան ուղին տեղափոխելուն։ Այդ մասին Լենն գրում է. «Իր պետության տնտեսական ուժը բարձրացնելու համար Պետրոսն աշխատում էր, որ Ռուսաստանը դառնա առևտրական միջնորդ և կարևոր ճանապարհ Արևելքի և Արևմուտքի միջև, իսկ մասնավորապես պարսկական կամ մետաքսի ու բոժոժի ճանապարհը հանել իր նախկին ուղղությունից (ցամաքով, Տրապիզոն և Զմյուռնիա), դարձնել նրան ջրային ճանապարհ Ռուսաստանի վրայով (Կասպից ծով, Վոլգա, Դվինա, Սպիտակ ծով)»[4]։

Ռուսական կառավարության ջանքերը որոշ արդյունք տվեցին. առևտրական հարաբերությունները Ռուսաստանի և արևելյան երկրների և առաջին հերթին Պարսկաստանի հետ մի փոքր աշխուժացան։ Բայց ցարիզմը, անգամ Պյոտր I-ի նման խոշոր պետական գործչի ղեկավարությամբ, չկարողացավ ամբողջությամբ իրագործել իր վերոհիշյալ ծրագիրը։

Խոսելով Ռուսաստանի արևելյան առևտրի մասին, չպետք է մոռանալ մի կարևոր հանգամանք ևս. Պարսկաստանի հետ կատարվող առևտրի հարցում եվրոպական որոշ երկրների առևտրական շահերը համընկնում էին Ռուսաստանի շահերին։ Շատ եվրոպացիներ Պյոտր I-ին ծրագրեր էին առաջարկում Պարսկաստանի հետ առևտուր անելու համար վաճառականական ընկերություն կազմելու վերաբերյալ։ XVIII դ. սկզբում այդպիսի ընկերություն ստեղծելու առաջարկով նրան դիմեցին հոլանդացի Պետեր Դիրկենդրեսը և Քյոնիսբերգի առևտրական գրասենյակներից մեկի տնօրեն Իսահակ Բարբուտը։ Նրանք Պյոտր I-ին առաջարկում էին արևելյան առևտրում ներգրավել բազմաթիվ օտարերկրացի վաճառականների և նրանց տալ մեծ արտոնություններ։ Օտարերկրացի այդ վաճառականները պետք է առևտուր անեին ոչ միայն Ռուսաստանում, այլև Չինաստանում, Ճապոնիայում և այլուր՝ վճարելով արտոնյալ մաքսեր[5]։

Խոսելով Վոլգա-կասպյան ճանապարհով կատարվող արևելյան առևտրի հարցում եվրոպացիների ունեցած շահագրգռվածության մասին, Վ. Պ. Լիսցովը գտնում է, որ «Եվրոպացիների հետաքրքրությունը Բալթիկ-կասպյան ճանապարհի նկատմամբ նպաստեց, որպեսզի Պյոտրի մոտ միտք ծնվի Պարս-

---

[3] Н. Г. Куканова, Ирано-русские торговые отношения в конце XVII начале XVIII вв. (рукопись канд. диссерт.), М., 1950, стр. 2.

[4] Լենն, Խոշայական կապիտալ, Երևան, 1934, էջ 94։

[5] В. А. Ульяницкий, Русские консульства за границей в XVIII в., М., 1899, стр. XXXIX—XC.

կաստանի հետ առևտուր անելու համար Ռուսաստանում վաճառականական ընկերություն ստեղծելու մասին»[6]։

Այս եզրահանգումը սխալ է, քանի որ, ըստ Լիսցովի, ռուսական կառավարությունն առևտրական այդպիսի ընկերություն կազմակերպելու գաղափարը միայն այն ժամանակ հղացավ, երբ տեսավ, որ եվրոպացիները շահագրգռված են այդ հարցում։ Բայց անկախ եվրոպացիների շահագրգռվածությունից, Պյոտր I-ը պետք է հիմնադրեր մի առևտրական ընկերություն Պարսկաստանի հետ նորմալ առևտուր կատարելու համար։ XVIII դ. առաջին քառորդում դա չհաջողվեց, որովհետև ցարական կառավարությունը շահագրգռված էր, որ այդ ընկերությունը ստեղծվի խիստ պրոտեկցիոնիզմի սկզբունքով։ Սակայն, քանի որ Դիրկենդրեսն ու Բարբուտն առաջարկում էին այդ ընկերության մեջ ներգրավել բազմաթիվ օտարերկրյա վաճառականներ և նրանց տալ մեծ արտոնություններ, ապա Պյոտր I-ը վախենում էր, որ նման պայմաններում միջազգային առևտրի քիչ փորձ ունեցող ռուս վաճառականությունը կենթարկվի օտար կապիտալի ազդեցությանը և վերջինս շատ կարճ ժամանակում գերիշխող դիրք կգրավի ռուսական շուկայում։

Առևտրական ընկերության ստեղծման անհաջողությունը կարելի է բացատրել նաև նրանով, որ ռուսական վաճառականությունն իրեն այնքան էլ ապահով չէր զգում մերձկասպյան նահանգներում և վախենում էր այնտեղ լայն մասշտաբի առևտրական գործողություններ կատարել։

Խնդիրն այն է, որ ռուսական կառավարությունը ինչպես XVII դ. երկրորդ կեսին, այնպես էլ XVIII դ. առաջին քառորդին հայ վաճառականներին և մասնավորապես Նոր-Ջուղայի առևտրական ընկերությանն էր համարում արևելյան առևտրում իր նպատակների իրագործման հիմնական միջոց։ Ճիշտ գնահատելով Ալեքսեյ Միխայլովիչի արևելյան տնտեսական քաղաքականությունը, Պյոտր I-ը ամեն ջանք գործադրեց, որ կարողանա պարսկական առևտրից քաղել առավելագույն պտուղներ և ամրապնդել իր երկրի տնտեսական հզորությունը։ «Պյոտր Մեծի գահ բարձրանալով՝ Հայաստանի հարաբերությունները Ռուսաստանի հետ ավելի աշխույժ և գործնական դարձան, որովհետև Պյոտրը լավ էր հասկանում այն օգուտը, որ ներկայացնում էին Ռուսաստանի հարաբերությունները օտարերկրացիների հետ։ Մշտական ծով փնտրելու իր ջանքերի ժամանակ Պյոտրը ճիշտ գնահատեց Արևելքի հետ ունեցած առևտրում Կասպից ծովի դերը։ Նա մտածում էր հենց այդ կենտրոնը ուղղել ողջ հնդեվրոպական առևտուրը»[7]։

Հայ-ռուսական տնտեսական հարաբերությունների հետագա աշխուժացմանը մեծ չափով նպաստեցին նաև Հայաստանի և Ռուսաստանի՝ զարգացման նոր փուլ մտած ռազմա-քաղաքական փոխհարաբերությունները։ Թուրքիայի և Պարսկաստանի լծի տակ տառապող հայ ժողովուրդը վերջնականապես համոզվեց, որ իր միակ փրկիչը Ռուսաստանն է և իր ճակատագիրն անդառնալիորեն կապեց նրա հետ։

Պյոտր I-ը լավ էր պատկերացնում այն առավելությունները, որ կարող է քաղել Ռուսաստանի նկատմամբ հայերի ունեցած տնտեսական և քաղա-

---

[6] В. П. Лысцов. Նշվ. աշխ., էջ 54։

[7] «Дневник осады Испагана афганцами, введенный Петросом ди Саркис Гиланенц в 1722—1723 гг.», СПб., 1870. стр. XXVI.

քական շահագրգռվածությունից, ուստի ամեն կերպ հովանավորում էր նրանց։ Դրա լավագույն օրինակն է այն վերաբերմունքը, որ ցուցաբերում էր ռուսական կառավարությունը հայ վաճառականների նկատմամբ։ 1701 թ. ապրիլի 11-ին Պյոտր I-ի հրամանով հայ վաճառականներին փոխադրամիջոցներ են տրվում իրենց ապրանքները Նովգորոդից Մոսկվա տեղափոխելու համար[8]։ 1706 թ. ռուսական կառավարությունը Արխանգելսկի տոնավաճառին օտարերկրյա վաճառականների մասնակցությունն արգելելով հանդերձ՝ այդպիսի իրավունք տվեց հայ վաճառական Բոգդան Կոնստանտինովին[9]։ 1707 թ. մարտի 1-ին Պյոտր I-ի հրամանով Մոսկվայից Արխանգելսկի վրայով արտասահման գնալու իրավունք են ստանում հայ վաճառականներ Իվան Պավլովը, Մելիքսեթ Պետրովը, Սարդիս Ավետովը և այլ անձինք[10]։

Ավելին, ինչպես հայտնի է, 1711 թ. Ռուսաստանի համար խիստ դժվարին ժամանակաշրջանում, ընդառաջելով հայ վաճառականական ընկերության խոշոր ներկայացուցիչ Սաֆար Վասիլևի խնդրագրին[11], Պյոտր I-ը նոր արտոնություններ շնորհեց հայ առևտրականներին։

Եթե XVII դ. երկրորդ կեսին Վոլգա-կասպյան ուղիով հայերի կատարած առևտուրը հիմնականում գտնվում էր պարսկահպատակ հայ վաճառականների, առաջին հերթին Նոր-Ջուղայի հայկական վաճառականական ընկերության ձեռքում, ապա XVIII դ. առաջին քառորդին ռուսական կառավարությունը որոշ չափով դժգոհ լինելով Նոր-Ջուղայի վաճառականական ընկերության գործունեությունից, մաքսերի և փոխադրավարձի վճարման հարցում արտոնություններ տվեց նաև մյուս հայ առևտրականներին։ Այդ տեսակետից շատ հատկանշական է Պյոտր I-ի վերաբերմունքը վրացահայ վաճառականների խնդրանքին. «1712 թ. փետրվարի 12-ին մեծ ինքնակալ թագավոր և մեծ իշխան Պյոտր Ալեքսեևիչը... բարեհաճեց լսել վրացահայեր Մամաջանի, Ավթանդիլի, Հարությունի՝ ընկերներով տված խնդրագիրը և հրամայեց, որ եթե նրանք Աստրախան կգան և կբերեն առևտրի համար մեծ քանակությամբ մետաքսի հումք և այլ ապրանքներ, ինչպես պարսկահայերն են բերում, նրանց կթույլատրվի գալ Աստրախան և ազատ առևտուր կատարել ինչպես Մոսկվայում, այնպես էլ Արխանգելսկում, ինչպես պարսկահայերն են առևտուր անում, և՛ մաքս և՛ փոխադրավարձ կվերցնեն նրանցից այնպես, ինչպես պարսկահայերից[12]։

Ցարական կառավարությունն առանձնահատուկ վերաբերմունք դրսևորեց Թիֆլիսի հայ վաճառական Օսիպ Ջալեևի նկատմամբ։

Առևտրական գործարքները հաջողությամբ կատարելու համար վերջինս ընդունել էր մահմեդականություն և Պարսկաստանում առևտրով էր զբաղվում։ Տեսնելով, թե ինչպես հայ վաճառականներից շատերն իրենց առևտուրն ուղղում են Վոլգա-կասպյան ուղին և շահույթներ ստանում, նա նույնպես որոշում է իր բախտը փորձել ռուսական հողում։ Ջալեևը նույնիսկ թախանձագին

---

8 «Армяно-русские отношения в XVIII в.» (сборник документов), Ереван, 1964, док. 3, стр. 5.

9 Նույն տեղում, փաստ. 4, էջ 7։

10 Նույն տեղում, փաստ. 8, էջ 15—16։

11 Центральный Государственный архив древних актов (այսուհետև՝ ЦГАДА), ф. 248, кн. I, л. 462.

12 «Армяно-русские отношения в XVIII в.», док. 28, стр. 60—61.

խնդրում է իրեն մկրտել ուղղափառ քրիստոնեական հավատով։ Պյոտր I-ը ընդառաջում է նրան և Կազանի նահանգապետ Սալտիկովին հրամայում Զալեևին իր ապրանքներով ազատորեն թույլատրել դալ Մոսկվա[13]։

Ցարական կառավարությունը հովանավորեց նաև Հոլանդիայում առևտրով զբաղվող հայ վաճառական Մերկուլ Աղազարովին, որը 1712 թ. մայիսին դիմում է պետական կանցլեր Գ. Ի. Գոլովկինին, խնդրելով իրեն Ռուսաստանում անմաքս առևտուր անելու հնարավորություն տալ։ Պյոտր I-ը անձամբ հետաքրքրվում է Մերկուլ Աղազարովի խնդրանքով և հրամայում նրան ընդառաջել ու հնարավորություն տալ Մոսկվայում բնակվելու և մյուս հայ վաճառականների նման ազատ առևտուր կատարելու։ Ցարը նաև կարգադրում է, որ նրան թողնեն մասնակցելու տոնավաճառներին և ուր «ցանկանում է գնա մյուս առևտրական մարդկանց նման»[14]։

Ցարական կառավարության ջանքերը որոշ արդյունք տվեցին։ Պարսկահպատակ հայ վաճառականների հետ միասին Վոլգա-կասպյան ուղիով կատարվող առևտրին սկսեցին մասնակցել նաև մյուս հայ վաճառականները։ Ա. Յուխտը խոսելով XVIII դ. առաջին քառորդում Աստրախանի շուկայում առևտուր կատարող հայ վաճառականների մասին, նկատում է. «Հայ վաճառականների շարքում աչքի էին ընկնում Անդրկովկասի զանազան քաղաքների՝ Բաքվի, Գյանջայի, Շամախիի և Երևանի, Նախիջևանի, Էրզրումի, Ագուլիսի և Թիֆլիսի, ինչպես նաև Իրանի քաղաքների (Զուղայի, Աստրաբադի, Թավրիզի, Արդեբիլի, Համադանի) և մերձկասպյան մարզերի՝ Գիլանի և Մազանդարանի բնակիչները։ Բացի այդ, հանդիպում էին նաև կաբարդական, Ղրիմի և արևմտահայեր»[15]։

Եթե XVII դ. երկրորդ կեսին վերաբերող փաստաթղթերում քիչ հիշատակություններ կան այն հայ առևտրականների մասին, որոնք ոչ Պարսկաստանից են և ոչ էլ Նոր-Զուղայից, ապա XVIII դ. առաջին քառորդում դրանց թիվը որոշ չափով ավելանում է։ Փաստաթղթերում հանդիպում ենք մի քանի վաճառականների անունների, որոնց մասին չի նշված «շահական մեծության պարսկական մարզից» կամ էլ Նոր-Զուղայից լինելը։ Այսպես՝ 1713 թ. դեկտեմբերի 1-ով թվագրված մի փաստաթղթում հիշատակվում է Նոր-Զուղայեցի հայ առևտրական Պիրի Մնացականովի, Գրիգորի Շահնովի, Պավել Իվանովի և հայեր Ստեփան Սավելևի ու Տոգի Թաթունևի մասին[16]։ Ոչ մի կասկած չկա, որ վերջին 2 վաճառականները, պարսկահպատակ չեն, ոչ էլ Նոր-Զուղայի հայկական առևտրական ընկերության անդամներ, այլապես այդ կնշվեր, ինչպես նշվել է մյուս վաճառականների՝ Մնացականովի, Շահնովի և այլոց մասին։

Մեկ ուրիշ փաստաթղթում (1714 թ. օգոստոսի 20) հիշատակվում է հայ վաճառականներ Իգնատ Ֆրանցովի, Միկիտ Մատվեևի և Սաֆար Մալեկովի մասին, ընդ որում առաջինի մասին նշված է նրա Նոր-Զուղայեցի լինելը, իսկ մյուս երկուսի մասին միայն ասվում է, որ նրանք հայ վաճառականներ են»[17]։

---

13 ЦГАДА, ф. 100, 1714, д. I, лл. 234—237.

14 «Армяно-русские отношения в XVIII в.», док. 31, стр. 71.

15 А. Юхт, Армянская колония в Астрахани в I половине XVIII в. (рукопись канд. диссертации), стр. 135.

16 «Армяно-русские отношения в XVIII в.». док. 34. стр. 78—84.

17 ЦГАДА, ф. 100, 1714, д. I, л. 253—258 об.

Ռուսական կառավարությունը շատ էր շահագրգռված, որպեսզի իր կողմը գրավի Զմյուռնիայի և Հալեպի վաճառականներին։ Այդ մասին Ա. Հովհաննիսյանը գրում է. «Շամախիում եղած ժամանակ Վոլինսկին աջակցություն ցույց տվեց Ղարարաղի հայ վաճառական Մանուսովին, որն առաջ առևտուր էր անում Հալեպում, իսկ հիմա որոշել էր փնտրել երջանկություն Ռուսաստանում։ Վոլինսկին ողջունեց Մանուսովի նախաձեռնությունը և ցանկացավ, որպեսզի նրա գովասանքի արժանի քայլերին հետևեն նրա հայրենակիցները»[18]։ Բայց այդ տեսակետից ամենակարևոր փաստը թերևս 1717 թ. հունվարի 28-ի Զմյուռնիայի հայ վաճառական Պետրոս Աբրոյին և նրա եղբայրներին Պյոտր I-ի տված առևտրական շնորհագիրն է։

Հոլանդիայում եղած ժամանակ Պյոտր I-ին դիմում են հայ վաճառականներ Պետրոս (Պիտեր), Ստեփան և Աբրահամ Աբրոները, խնդրելով իրենց թույլ տալ առևտուր անելու Ռուսաստանում։ Լինելով զմյուռնացի վաճառականներ, նրանք մինչ այդ առևտուր էին կատարում Հնդկաստանում, Պարսկաստանում, Թուրքիայում և զանազան եվրոպական երկրներում։ Այժմ ռուսական քաղաքներում առևտուր անելու համար վերոհիշյալ վաճառականները խնդրում էին մաքսերի և փոխագրավարձերի վճարման հարցում իրենց տալ այն բոլոր արտոնությունները, որոնցից օգտվում էին նոր-ջուղայեցի պարսկահպատակ հայ վաճառականները։ Պյոտր I-ը բավարարում է նրանց խնդրանքը. «Մենք պետության մեջ առևտրի բազմապատկման համար հակված ենք ոչ միայն այս խնդրանքին ընդառաջ գնալու, այլև նրան (Պետրոս Աբրոյին— Ա. Ք.) մեր շնորհագիրը տալ բարեհաճեցինք՝ հրամայելով կառավարող մեր սենատին, նահանգապետերին, փոխնահանգապետերին, լանդրատներին և զանազան աստիճանի զինվորական ու քաղաքացիական կառավարիչներին, իսկ քաղաքներում վերահսկիչներին և ծառայողներին՝ հիշյալ Պետրոս, Աբրահամ, Ստեփան Աբրոները, երբ մեր այս շնորհագրով, իրենց առևտրի համար մեր պետության ճամփան բռնեն, նրանց ամենուրեք ազատ և անարգել, ցամաքով և ծովով, ինչ ճանապարհով և ինչ քաղաքներով նրանք գնալ կցանկանան— իրենց բոլոր մարդկանցով և ապրանքներով բաց թողնել, նրանց նկատմամբ ոչ մի կամայականություն և խոչընդոտ չհարուցել»[19]։

Ավելին, Պյոտր I-ը պահանջում է, որպեսզի իր հպատակները վերոհիշյալ վաճառականներին ամենուրեք ցույց տան անհրաժեշտ օգնություն և խստորեն զգուշացնում, որ դաժանորեն կպատժի նրանց, ովքեր կփորձեն ապօրինի մաքսեր գանձել Պետրոս Աբրոյից և նրա եղբայրներից։

Պյոտր I-ը նրանց նաև թույլատրեց բնակվել Ռուսաստանի խոշորագույն քաղաքներում և զբաղվել զանազան այլ ապրանքների վաճառքով։

Պյոտր I-ը լավ էր հասկանում, թե մյուս վաճառականների վրա ինչպիսի մեծ ազդեցություն կգործի արևմտահայ նշանավոր վաճառականների մասնակցությունը Վոլգա-կասպյան ուղիով կատարվող առևտրին, ուստի չէր զլանում ամեն տեսակ արտոնություններ պարգևել նրանց։ «Եվ... հրամայում ենք որ նրանց՝ Պիտեր Աբրոյին և նրա եղբայրներին ու գործակատարներին ամեն դեպքում ցույց տրվի օգնություն և ուղեկցող, որպեսզի դրան նայելով նրանց

18 «Армяно-русские огношения в XVIII в.», стр. XII.

19 Նույն տեղում, փաստ. 42, էջ 105—106։

եղբայր հայերը և ուրիշ ազգությունների մարզիկ ցանկանան իրենց առևտուրը մեր հողերով Պարսկաստան ուղղել»[20]։

Բոլորովին պատահական չէր Պյոտր I-ի ձգտումը՝ Զմյուռնիայի և Հալեպի հայ վաճառականներին ներգրավելու Պարսկաստանի հետ կատարվող ռուսական առևտրում։ Զմյուռնիան և Հալեպը մեծ նշանակություն ունեին Թուրքիայի համար որպես առևտրական կենտրոններ։ Հասկանալի է, որ Հալեպի և Զմյուռնիայի հայ վաճառականների ներգրավումը Վոլգա-կասպյան ուղիով կատարվող առևտրում զգալի հարված կլիներ Ռուսաստանի առևտրական մրցակիցներին և առաջին հերթին Թուրքիային։ Այդ նպատակով, ինչպես տեսանք, Պյոտր I-ը նշանակալից արտոնություններ էր տալիս հայ վաճառականներին, որոնք օգտվելով դրանցից՝ զգալիորեն աշխուժացրին իրենց առևտուրը և սկսեցին ավելի մեծ խմբերով գալ Ռուսաստան։

Ինչպես XVII դ. երկրորդ կեսին, այնպես էլ XVIII դ. առաջին քառորդում հայ վաճառականները Ռուսաստան էին բերում տարբեր տեսակի մետաքսի հումք (թանկագին, բարձրորակ, ցածրորակ, ճմլած, մանրած և այլն), արևելյան զանազան տեսակի կտորներ ու գործվածքներ (բամբակի վառ կարմիր գործվածքներ, արևելյան կիսամետաքսյա կտորներ, հնդկական մետաքսյա գործվածքներ, հազվագյուտ նախշազարդ, մետաքսյա կտորներ և այլն), արևելյան այլ ապրանքներ (գորգեր, ծածկոցներ՝ սովորական և շղարշից պատրաստված հագուստներ, կոփածո պողպատից պատրաստված սրեր ու պանակներ, նշի միջուկ, և այլն), թանկարժեք քարեր (հակինթներ, մարգարիտներ, շափյուղաներ, լալ ու մարջան, բյուրեղապակյա զանազան քարեր, ապակյա հուլունքներ, ոսկյա ու արծաթյա մատանիներ, զմրուխտներ, սարդիոնի քարեր և այլն)։

Իհարկե, վերոհիշյալ ապրանքների մեջ ռուսական կառավարությանը հետաքրքրողը գլխավորապես մետաքսն էր, որն, ինչպես նշեցինք, կարևոր նշանակություն ուներ երկրի նորաստեղծ մանուֆակտուրային արդյունաբերության համար։ Ուստի պատահական չէ, որ Պյոտր I-ը ամեն ջանք գործադրում էր, որպեսզի արևելյան մետաքսի զգալի մասը տեղափոխվի Ռուսաստան։ Նա իր հոր՝ Ալեքսեյ Միխայլովիչի նման հատկապես հայ վաճառականների օգնությանը դիմեց հաշվի առնելով հետևյալը. ա) պարսիկ վաճառականները անձեռներեց էին արևելյան ողջ առևտուրը և առաջին հերթին մետաքսհումքը Վոլգա-կասպյան ուղին տեղափոխելու խնդրում. բ) ռուս վաճառականները չէին կարող այդ գործի ամբողջ ծանրությունը վերցնել իրենց վրա, որովհետև մերձկասպյան մարզերում ենթարկվում էին տեղական ֆեոդալների հարձակումներին և նյութական հսկայական վնասներ կրում։ Չպետք է մոռանալ նաև այն, որ Պարսկաստանում և Անդրկովկասում հայ վաճառականական կապիտալը առաջնատար դիրքեր էր գրավում, որի հետ ռուսական կառավարությունը հաշվի չնստել չէր կարող։ Ուստի Պյոտր I-ը նկատի ունենալով այդ առավելությունները և այն օգուտը, որ տվեցին հայ վաճառականները անգլիական արևելա-հնդկական առևտրական ընկերությանը, որոշեց իր տնտեսական պլանները առևտրի հարցում իրագործել հիմնականում նրանց միջոցով։ Այդ իսկ պատճառով էլ XVIII դ. սկզբում Ռուսաստանի արևելյան առևտրական շրջանառության մեջ հայ վաճառականների դերը ոչ միայն չպակասեց, այլև զգալիորեն մեծացավ։

20 Նույն տեղում, էջ 106—107։

ЭКОНОМИЧЕСКАЯ ПОЛИТИКА РОССИИ НА ВОСТОКЕ И АРМЯНСКОЕ КУПЕЧЕСТВО (НАЧАЛО XVIII В.)

А. А. КЮРКЧЯН

Резюме

Армяно-русские экономические отношения пережили определенный прогресс в конце XVII и в начале XVIII вв.. В этот период восточная торговля России значительно расширилась благодаря энергичным усилиям Петра I. Мероприятия царского правительства преследовали цель не только направить экспорт восточных товаров, в частности, шелка-сырца из прикаспийских областей в Россию и через Россию в страны Западной Европы, но и использовать его для развития собственной мануфактурной промышленности.

Для осуществления своих торгово-экономических планов Петр I, как и его предшественник Алексей Михайлович, прибег к помощи армянских купцов, в первую очередь, армянской джульфинской компании. В этой торговле большую роль играли не только джульфинские армянские купцы, но и купцы других регионов. В частности, Петр I значительные привилегии и льготы предоставил тифлисскому купцу-армянину Осипу Залееву, жившему в Голландии и торговавшему в Смирне и Алепе, купцам Агазарову, братьям Абро и др. Поэтому и участие армянского купечества в восточной торговле России в указанный период значительно расширилось.